



երկիրը եւ իրար միացած . իրենց շարունակութիւնը երկրի ներքին գաւառներն էլ իրարից բաժանած է : Հայաստանի բարձրաւանդակի այս հիւսիս-արեւմտեան ծայրի լեռները կենդրոնական Ասիայի Կուէն-Լուն եւ Հինգրիկուշ լեռների շարունակութիւնն են, որոնք ուղղւած են դէպի արեւմուտ եւ հասնում են Փոքր-Ասիայի արեւմտեան ափերը, մինչեւ Եգէական ծով : Հայկական Պար լեռները Մասիսից եւ Արագածից շարունակելով իրենց ընթացքը Կարսի եւ Բասէնի միջով մտնում են ձորոտի Աւազանը Կանդիլ եւ Գուճլու լեռներ անունով : Հայկական Տաւրոս լեռները Կարնոյ դաշտի հարաւից՝ Փալան-Թեօքեան եւ Սրմանց-Բին-Գեօլ «Բիւրակն» լեռների շարունակութիւնը՝ մտնում են նոյնպէս ձորոտի Աւազանը Կարաբէլ լեռնաշղթայով, որը ձորոտի եւ Եփրատի ջրբաժան գիծն է կազմում : Հիւսիսից Վրաստանի լեռնաշղթան շարունակուելով՝ Գուրիան բաժանում է Աջարիայից, ձորոտի Աւազանը Բիոնի աւազանից : Պոնտոսի կողմից Պոնտական լեռնաշղթան՝ Պարխար, Բաշկար, Վարչամ-Բէզդ եւ Չափանց բաժանում են ձորոտի Աւազանը Պոնտական առուակներից, որոնք թափւում են Սեւ ծովը :

ձորոտի Աւազանի արեւելեան սահմանները շարքով բռնել են՝ Չուբուխ-Նարին-Բաշի, Շահվէրդինա (Շահվերդի), Նասմարա, Սամսոնոսթա, Կարա-Թեփէ, Կաննի, Արսիան, Եալանուղ-Չամ, Թով-Կայա, Դիւց, Դիք, Սինէքի-Թէփէ, Եաղլի, Բիւրուրան, Կրաշ-Թէփէ, Կուրգիվան, Եասամալ, Եալավուղ-Չամ, Գերմուջէք, Չամուլ, Բանջարոս (Փանջուրէտի), Աբունդեր, Կրգըլ-Դեղուկ, Գիւզուլթանմաղ, Մարդիւլ, Կոփ, Կարաջա, Ալաքէր, Խղբելիաս, Ագմեգրէ, Չամուրլի-Դերէ եւ Սոգանլու լեռնաշղթաները : Այս լշ-ը ձգուած են 60°-60,30° երկարութեան վրայ, օձապտոյտ դժերով, որոնցից մեծագոյն մասը պատած է խիտ անտառներով : Լեռնաշղթաների շարքը սկսում է հիւսիսից 41,45° եւ վերջանում է հարաւում 40,15° լայն . :

ձորոտի Աւազանի հարաւային սահմանները բռնած են արեւելքից դէպի արեւմուտք հետեւեալ լշրը . Սոգանլու լին միացած են Չախր-բարա, Կարդա-գեղուկ, Գիլիա, Ագմեգրէ, Չամար, Օյուկ-Թաշ (քանդակաւոր ժայռ), Թոփ-Դաղ, Չամուշ սրթի,

Սիվրի, Կարաշիման, Կանդիլ, Գուճլու, Կուշ-կուշար, Վարդադուր, Դեյիկով, Ագդաղ, Կուրկունրունդար, Կարա-Եայլա, Զիւղի-դաղ, Դանջիկ, Կոփ, Սղըշի, Մարխան, Չորոգմա եւ Վալուկ լշ-ները : Այս լշ-ները օձապտոյտ ձգուած են եւ տարածուած 40°-40,15° հիւս. լայն. եւ 57,30° մինչեւ 60,15° երկար : Լշ-ները արեւելքում անտառապատ են, դէպի արեւմուտք նօսրանում են անտառները, նուազում, մացառի են փոխւում եւ խոպոտ լեռկանում են :

ձորոտի Աւազանի արեւմտ-հիւսիսային սահմանը մի թեք գիծ է աղեղնաձեւ, որով ամբողջ Աւազանը մի մեծ եռանկիւնի է կազմում : Լշ-ների շարքը հարաւ արեւմուտքից արեւելք Վալուկ լեռները տարածուելով՝ հիւսիս-արեւելք միանում են Զիարէթ, Նատեխելիբի, Սաղանլի, Սարվ-Կայա, Բեշի-Կայա, Գրքլար (քառասուն գից), Չափանց, Սոգորնի, Եալաղուղ, Վարչամ Բէզդ, Պարխալ (Բալխար), Մթացկարա, Բաշքար, Ալթի-Պարմաղ, Մարսիս (Մասիս) Գուլիխանա, Կվախիղ, Բիւքիւրդ-Դաղ, Դէմիր-Կրան, Ահար-Բաշի, Պալ-Նաղիկ-Թէփէ, Փատաջուր, Պալըզլի, Յկարխատի, Սաուղուրզի, Եանդունլի, Չալոնա, Կվախերիսի, Բեհլիվան եւ Կարաշալվար, որոնք տարածւում են դէպի Սեւ ծովի ափերը, մինչեւ Սարի եւ Մաքրիալի նուամասոյցները : Աջարայի եւ Գուրիայի մէջ ջրբաժան գիծն են կազմում հետեւեալ լշ-ները, արեւմուտքից-արեւելք Նարաձիբի, Աջարիս-Խելի, Չավիլիամթա, Մորվէլ, Կալվա, Փերանդա, Խինօ, Տաղինաուրի, Պատարաղեաի, Գոտի-Մերիս, Կուրջիլիս-Յկարա, Սակուլա-Փէրդի, Յիլից-կարի, որը միանում է Չուբուխ Նարին-Բաշի լշ-ին : Այս եռանկեան հիւսիս-արեւելեան ծայրը բռնած է Չուբուխ-Նարին-Բաշի, հարաւ-արեւելեան ծայրը Սոգանլու անտառապատ լեռները եւ հարաւ-արեւմտեան ծայրը Վալուկ լշ-ն :

1. Այս եռանկիւնու միջին մասից սկսւում է ձորոտը, ուղղւում է նախ հարաւային կողմով ուղղակի դէպի արեւմուտք, Չերմես կամ Չերմենէ անուան տակ, 55 կիլոմետր երկարութեամբ : Այստեղ միանալով Կուրգ առուակին, անունը փոխւում է Մասսատ վտակի, Մասսատ ձորի եւ աւանի անունով : Ակունքում Չերմես վտակը 7000' (ոսնաչափ) բարձրութիւն ունի Սեւ ծովից, սրբնթաց գիծում է արեւմտահարաւ

մինչև Բայբուրդ եւս 35 կիլոմետր, կամ  
 ահուճքից մինչև Բայբուրդ 90 կիլոմետր :  
 Ահուճքից մինչև Բայբուրդի հովիտը ձո-  
 րոխի հունը իջնում է աւելի քան 1000' եւ  
 կազմում է ձորոխի նախնական գաւառը-  
 հովիտը, որին այսօր կանչում են Օվաջըկ  
 (Հովախի) :

2. Ձորոխը Խան-Մատէն գեղից յե-  
 տոյ, մտնելով Բայբուրդի կամ Բարբերասնի  
 դաշտը, ուղղւում է դէպի հիւսիս եւ  
 կոչւում է ձորոխ կամ Ժողովրդական դար-  
 ձուածով Խելաւ-ձորոխ : Բայբուրդ քա-  
 ղաքը հասնելուց յետոյ նա դէպի հիւսիս  
 արեւելք է թեքւում կոր գծով, ապա ըն-  
 դունում է Բալախոս վտակը : Խան-Մատէ-  
 նից մինչև Խաչք եւ Ջինջուլ առուակներն  
 ընդունելը կազմում է ձորոխի երկրորդ  
 գաւառը՝ Բայբուրդի հովիտն ու դաշտը :

3. Բալախոս վտակը սկսւում է Գիւլ,  
 Օթլուկըէլ, Կարադաշ եւ Վալուկ լեռներից,  
 իջնում է Հինգի, Լոռի ձորերից, ոտոգում է  
 Սիւնուր եւ Բալախոս դաշտը եւ ապա ձախից  
 խառնւում է ձորոխին այնտեղ, ուր ձորոխն  
 սկսում է հոսել դեպի արեւելք : Բալախոսի  
 խառնունքի մօտ ձորոխը ունի 5800' բարձ-  
 րութիւն, մեծ է ջրով եւ գնում է ասեղազոչ  
 սահանքով : Բալախոսի վտակը ոտոգում է  
 ձորոխի երրորդ գաւառը :

4. Բալախոսի խառնունքից 6-7 կիլո-  
 մետր ցած, Ջինջուլ եւ Խաչք առուակների  
 խառնունքից յետոյ, սկսւում է Սպերի (Իս-  
 պերի) երկար հովիտը, որ 40 կիլոմետր եր-  
 կարութիւն ունի եւ տեղ-տեղ լեռների կա-  
 տարները իրարից 5-10 կիլոմետր հեռաւո-  
 րութիւն ունին եւ վերջանում է այս հովիտը  
 աջից եւ ձախից ընդունած Հնուտ կրկին ա-  
 ոուակներով : Սպերի հովիտը կազմում է  
 ձորոխի չորրորդ գաւառը :

5. Կրկին Հնուտներից սկսւում է Կիս-  
 կիմի (Կիշկա-Բոսա) հովիտը, ուր ձորոխը  
 սկսում է թեքուիլ դէպի արեւելահիւսիս եւ  
 ապա հիւսիսարեւելք, մինչև Ամլէթ եւ  
 Ախլաթ գեղերը, ուր Պարխալը խառնւում է  
 ձորոխին : Կիսկիմն էլ Սպերի նման ձորո-  
 ւի բարերեր եւ ընդարձակ հովիտն է, ուր  
 դաշտերն աւելի ընդարձակ են եւ աւելի մեծ  
 յարմարութիւն ունին երկրամշակութեան :  
 Կիսկիմը ձորոխի հինգերորդ գաւառն է  
 կազմում :

6. Ապա Պալխար կամ Պարխալ վտա-  
 կը իջնում է Քաչկար լճից, ոտոգում է

Պարխալի եւ Բահլի հովիտները 36 կիլոմետր  
 երկարութեամբ, ձախից խառնւում է ձո-  
 րոխին : Այս վտակը իր ոտոգած հողերով  
 եւ բազմաթիւ առուակներով կազմում է  
 վեցերորդ գաւառը :

7. Կոլիկից ձորոխն ուղղւում է հիւ-  
 սիս-արեւելք ձախից ընդունում է նախ Խամ-  
 սալի՝ Փետնիզուր եւ ապա Մելօ առուա-  
 ները մինչև Օրջոխ (Որջնհաղ) 35 կիլոմետր  
 երկարութեամբ, որը կոչւում է Խալխալի  
 վիճակը կամ գաւառը : Այս գաւառը իր  
 առուակների աւազանով կազմում է ձորոխի  
 եօթներորդ գաւառամասը :

8. Պալխար վտակը ընդունելուց յե-  
 տոյ ձորոխը ուղղւում է դէպի արեւելք 10  
 կիլոմետր երկարութեամբ մինչև Լիվանա  
 եւ Կոլիկ գեղերը եւ ընդունում է աջից Թոր-  
 դումի եւ Օլթիի միացեալ վտակները : Թոր-  
 դում վտակը սկսւում է Դումլու եւ Կուչ-  
 կուչար լճից, հարաւից հիւսիս ուղղւում  
 է, անցնում է Թորդում լճով, թափւում է  
 Թեւի ջրանցքը եւ 105 կիլոմետր ճանապարհ  
 կտրելով եւ բազմաթիւ առուակներ ընդու-  
 նելով՝ հասնում է ձորոխին : Թորդում  
 վտակն իր ընդարձակ աւազանով կազմում  
 է ութերորդ գաւառը ձորոխի Աւազանի :

9. Օլթի վտակն սկսւում է Կանդիլ  
 (Ոսկեանց) լեռներից, ուղղւում է դէպի  
 հիւսիս ընդունելով բազմաթիւ առուակներ :  
 Ինչպէս Թորդում վտակը, նոյնպէս Օլթի  
 վտակը իրենց սկունքում ունին բազմաթիւ  
 լճակներ, իրենց ընդարձակ մարգաստաննե-  
 րով եւ շրջապատուած են անտառապատ  
 լեռներով : Օլթի վտակն ընդունում է Բար-  
 դուզ, Կոծձոր, Փանազկերտ, Փէնէկ (Բա-  
 նակ) եւ Թաւուսկեր (Տալոյքար) առուակ-  
 ները, 100 կիլոմետրից աւելի երկարութիւն  
 ունի միայն կենդրոնական Օլթի վտակը եւ  
 շատ ընդարձակ աւազան : Օլթի վտակը  
 կազմում է իններորդ գաւառը ձորոխի Աւա-  
 զանի :

10. Արգվինի գաւառամասում ձորո-  
 խը աջից-արեւելքից ընդունում է Շաւչէ-  
 տի վտակը, որ բազկացած է Շաւչէտ, աջա-  
 կողմեան Իմերիեւ եւ ձախակողմեան Արդա-  
 նուչ առուակներով : Շաւչէտ վտակը 85  
 վերսա երկարութիւն ունի եւ ընդարձակ  
 աւազան, իր բազմաթիւ վտակներով : Շաւ-  
 չէտ վտակը տասներորդ գաւառամասն է ձո-  
 րոխի Աւազանի :

11. Օրջոխից մինչև Արգվին եւ ապա

մինչեւ Պատրիարխի եւ Իրսայի գետախառնունքը, արեւելեան 25 կիլոմետր երկարութեամբ, կազմում է Արդվինի տասնմէկերորդ գաւառամասը ձորոխի Աւազանի:

12. Իրսայից ձորոխը դէպի հիւսիս ուղղուած 15 կիլոմետր անցնելուց յետոյ, ձախից ընդունում է Մուրղուլ վտակը, որ 30 վերստաչափ երկարութիւն ունի եւ ընդարձակ հովիտ: Մուրղուլը կազմում է ձորոխի տասներկուերորդ գաւառը:

13. Մուրղուլի խառնունքից 3-4 կիլոմետր հիւսիս, ձախից ձորոխին խառնում է Իչկարա եւ 10 կիլոմետր աւելի ցած Բէհէզվան վտակները: Սեւ ծովի ափերից մինչեւ ձորոխի ափը 10-12 կիլոմետր է եւ կազմում է տասներեքերորդ գաւառը ձորոխի Աւազանի, մինչեւ ծովախառնունքը:

14. Բորչխա վտակի գիւմադէմ ձորոխի աջ ափից խառնում են Դեվիա, ապա Կլասկուրի եւ Մարադիտի դէմ Մաճիխել վտակները, որոնք կազմում են տասներորդ գաւառը ձորոխի Աւազանի եւ քաղաքականապէս միացած են Բորչխա-բէմէլ վանին:

15. ձորոխի ամէնից երկար, ջրառատ, բազմաթիւ առուներով ողողուած եւ ընդարձակ աւազանով գաւառը Աջարան (Եգերխան) է, որը 120 կիլոմետր երկարութիւն ունի, եօթը մեծ ճիւղեր եւ հարիւրաւոր առուակներ: Աջարան կազմում է ձորոխի վերջին եւ տասներկուերորդ գաւառը. որոնցից իւրաքանչիւրը իր զիրքը, զերը եւ անցեալն ունի, որոնց նկարագրութեան համար կազմուած է սոյն երկը:

16. Սրանց վրայ աւելացնելու ենք Կորոնիա-Թաւի, Չակվիսթաւի եւ Կինդրիչ առուակները, որոնք Բաթումի գաւառի հիւսիսային կողմից ուղղակի թափում են Սեւ ծովը եւ կազմում են տասներկուերորդ գաւառամասը:

Ա.

Հովոնի եւ Մասսաթի նովիտը:

ձորոխի ակունքը գտնւում է ձորոխի Աւազանի կենդրոնում, Կազան Բաշի<sup>1</sup> բնո-

նրի արեւմտեան լանջերից բլիւում է իրարից երեք-երեք կիլոմետր հեռաւորութեամբ երեք առուակ, հիւսիսայինը՝ Չերմեաի, միջինը Յուրէն-Շէհէր<sup>2</sup>, հարաւայինը՝ Կարաղալուր, որոնք երեքը միանում են 4-5 կիլոմետր դէպի արեւմուտք հոսելուց յետոյ, աւերակ Յուրէն Շէհէրի մօտ եւ ապա ուղղւում են արեւմուտքն: Կազան-Բաշի լեռներից մինչեւ Սեւ ծովը ձորոխը 380 կիլոմետր երկարութիւն ունի, 7000' ոտնբարձր: Չերմեաին առաջ զնալով ոտողում է Բաղչա-Վանք<sup>2</sup>, Կարակայա, Օրքա-Վե-

հեռաւորութեան վրայ սոյս ընդարձակ աւերակները ցոյց են տալիս, որ սոյս վայրում հնուէր, ոչ միայն Պարթեւների, այլ նրանցից էլ վաղ քաղաքակրթութեան ժողովուրդ է ապրել, Կազան, Կազան-Բաշի, Կազանչի, Կազանֆէր, Կազնեֆէր կոչւում են ամբողջ Հայաստանում բազմաթիւ աղբերակներ, առուակներ, լճակներ, որոնք բղետւմ են բարձր լճից: Զբաբալե կամ Սուկու էտ լեռների գագաթից իջնում է գէպի արեւելա-հիւսիս Կազան-Ջուր առուակը, որ ապա անցնելով Զարբա-Խանա գեղից, սրա անունն է վերցնում: Արագածի վրայ գտնւում է մի լճակ, որ Կազանֆէր է կոչւում, նոյնպէս մի գիւղ Կազանչի անունով: Արփաչայի ափերում՝ Արփա լճից ոչ հեռու, ճահճների մօտ Կազանչի (Ղայղուե) անունով մի գեղ կայ: Գարալագեաղից մի առուակ միանում է արեւելեան Արփաչային Կազանչի անունով: Կուր գետի ափերը Կուրգաւառում սկսում է Կազնեֆէր լճակից: Վանի լճի արեւմտահիւսիսային կողմ Կոփ լեռների եւ Կոփ աւանի մօտ, Կազուկ լճակից ոչ շատ հեռու գտնւում է Կազան լճակը: Մասսի ստորին լանջերում կայ Կազանչի անունով գեղ եւ առուակ: Գանձակի գաւառում կայ մի գիւղ եւ առուակ Կազան-Բուլակ անունով: Զեվադի գաւառում Կազանչի անունով գիւղ եւ առուակ կայ: Գազաւանում կայ մի գեղ Կազանի շէն անունով, այնպէս որ Կազան բառը պիտի նշանակէ ջրերի յայտնութեան-ընդանու կէտ: Զբոյնի զօրութեան յայտնութիւն (EPIΦANON) կովկասի լճի Կազ-Բեզ լեռան անունն էլ ընդհանուր Կազարմանն է ցոյց տալիս:

<sup>1</sup> Յուրէն-Շէհէր աւերակները անտարակոյս մեծ քաղաքի աւերակների մնացորդներ են, մինչեւ չպեղուի, չի կարելի այդ քաղաքի մասին որոշ գաղափար կազմել: Աւերակները շատ ընդարձակ են. մեծամեծ թումբեր կան 2-3 մետր հողով ծածկուած: Տեղւոնց սրբապաշտ քարէ, որ մեր են երեւում եւ այդ աւերակներից բազմաթիւ քանդակուած քարեր տարուած են այլ եւ այլ սեղեր: Յուրէն-Շէհէրի եւ Փաշա-Փազի աւերակները ոչ առաջինն են եւ ոչ էլ վերջինը, Յուրէն Շէհէրից 5 կիլոմետր հարաւ արեւմուտք Չերմեաի վտակի ափին կայ համանման մի ուրիշ աւերակ Ռոտան, Օրթա-Վէրան անունով: Այս բոլորն յիշեցնում են, որ սոյս Հովոնի ժամանակին նախարարական եւ արքայական բնակավայր է եղել: Յուրէն-Շէհէրի անունը ցոյց է տալիս որ նա գոյութիւն ունեցել է Պարթեւ-Արշակունիների շրջանում: Չերմեաի առուակը, որին ընդհանրապէս Չերմեա են կոչում: Արգեօք Խորենացու յիշած Զրմեա Ռոտանը չէ, որը Գրգ գոթում վերաջինեւ եւ այն սեղից թագաւորում էր ամբողջ Հայաստանի վրայ Տիրան Արշակունի քանս տարի:

<sup>2</sup> Բաղչա-Վանքի մէջ կայ մի աւերակ տաճար, որի շուրջը բազմաթիւ աւերակներ, իսկ այդ աւերակներից մէկի հիմնական շարքերի տակ նկատելի է Ալեքսանդրեան հսկայական պարիսպ, որը մի ժամանակ ծառայել է որպէս ամբողջ եւ ապա պալատական միջնուածքի հիմք: Բաղչե-Վանքը Յուրէն-Շէհէրից ընդ ամենը 2-3 վերստ հեռաւորու-

<sup>1</sup> Կազան-Բաշի լճն միացած է հարաւային Կազանի եւ Սալախի Բաշի լեռների: ձորոխի կենդրոնական ափերն է, որի արեւելեան փեղերից բղետւմ է Զիարեթ լճակից՝ Զիարեթ առուակը, որի ափերին տարածուած է Փաշա-Փազի աւերակները: Յուրէն-Շէհէրի աւերակներից 7-8 կիլոմետր

րան, Ինջի-Սու, Զէկէգրէկ<sup>3</sup> Ալպէ, Զիկուտ, Միւլէ<sup>4</sup> և Ալջի գեղերը, սրանց աւերակներն և ևայլաները, որոնց շուրջը զբռնուած են կալուածատէր իշխանների զղեակներն ու ամբոցները, որոնք պարզ ցոյց են տալիս, թէ նրանք չըջապատուած էին Յուրէն-Շէհրիւ-Արքայական Ոստանին: Չերմէսը աւելի առաջ գնալով՝ ոռոգում է Բերգինց, Կերբէկ, Բոզոն, Լէյլեկ-(արագի), Կըրբգ (կործանուած), Զէրալի, Դէյիւման-Դերէ, Փէրիմոն<sup>5</sup>, Կարասայիդ, Յունուս, Կըզըլ-Հասան և ևայլոց գեղերը, որոնք իրենց անցեալ փառքերից թէև և մերկացած են, թշուառ ու աղքատ, բայց նկատելի է, որ ամէն մի գեղ ունեցել է անցեալում իր ամբոցն ու զղեակը<sup>6</sup>: Այս

թիւն ունի, հետեւաբար դա կազմւած է նրա մասը կ'մտնարձանը:

1 Օրթա-Վերան կամ Օրթիա-Վերանը աւելի ընդարձակ աւերակներ ունի, բայց աւելի աղքատիկ վիճակ: Գուցէ սա վրի Յուրէն-Շէհրի շուրջ-արհեստանոցը, որտեղ ապրում էին վարպետ արհեստաւորները իրենց արհեստանոցներով և նեղը թիւն շէն պատճառուած ազնուազարմ իշխան-նախարարներն իրենց աղմուկներով: շէն ապականում փակիսուն ոտիկներով շնած օղը:

2 Դնջի-Սու, Մարգարտի ջուր, երեւի այս անունը թարգմանել են թաթարները սովորական կարգով:

3 Չէկէգրէկ ճորոխի Աւազանը բազմաթիւ էգրէկ — ագարակ գեղեր ունի, որոնք յաճախ որեւէ բառերով ածանցուած են: Այս էգրէկները ցոյց են տալիս, որ կալուածատէր-նախարարները կամ Ոստանիկները և կամ նոյն իսկ Սեպուհներու սպահները ունեցել են իրենց ընդարձակ ագարակները, որոնք յատուցում են եղել, որոշ նիւթերի արտադրութեան: Յրիայի, Իշխանբուրի (Իշխանբուր) և Խալիսալի ձիթապահի օյգիները ցոյց են տալիս, որ նրանք հնուցը աւելի խնամքով են կազմուած եղել և աւելի շատ բերք են տուել:

4 Միւլէ-Սեփիսականութիւն. Այս բառը մտած պիտի լինի Սեփիսները շքանում, ո՛չ ու զարթեւ — Պահլաւա շքանից: Իւլաղը խալիֆների շքանում և ընդհանրապէս հակառակորդ էր Միւլէ արքայներին-Մալքերներին, քանի որ հասնայ կալուածները համարում էին Պետական համայնական սեփհականութիւն (Արքայի-ամիրէ):

5 Փէրիմոն և Վարգենիս գեղերն ունին իրենց յատուկ առուները, որոց հին աւերակները ցոյց են տալիս, թէ դրանք պաշտամունքի աղբիւր են եղել: Փէրիմոնը աւելի բարձր է, իսկ Վարգենիսը իր վարդաօտաններով նուիրուած է եղել Անահիտին: Վարգենիսի ձորը մասն է կազմակերպւած արգէհների վիշապազանց ձորին, ուր վարդի թփերը մշտնջենա որակէս դալար են, վարդի կոկոններով զարդարուն:

6 Ինչպէս որ Չերմէսի հովիտի երկու կողմերը զարդարուած են Աշքաղարեան, նախապատմական և պատմական աւերակներով, Չերմէսի ակունքից, Յուրէն-Շէհրից և ևայլոց գեղերով, Չերմէսի հեռաւորութեամբ, նոյն կարագից երէր-չորս կիլոմետր հեռաւորութեամբ, նոյն կազան-Բաշի լեռներից բղկած Շատկամ Մէլմա բաղնիկ կամ Սարգամա առուակի շուրջը գտնուած են բազմաթիւ գեղեր, որոնք ինչպէս նկատելի է, դարձեալ շքապատած են եղել որոնք ինչպէս նկատելի է, դարձեալ շքապատած են եղել Եւրբէն և Օրթա-Վերան շէնների աւերակները: Սրանք եփ-բաթի ակունքներն են, Շատ վտակի շուրջը, որը ինչու է դարձեալ Կորնոյ շամբ միանալու: Գու՛մը լեռներից իջած Գու՛մու վտակին: Այս գեղերից իրենց աւերակներով

աւերակները ո՛չ միայն հովտումն են, այլ և բարձունքներում, բոլորն էլ իրենց ապառաժ լեզուով յայտնում են, թէ իրանք վաղեմի արհեստաւորների աննկուն ջանքերի կենդանի վկաններն են: ծառայել են ամառանոցի, ձմեռանոցի և գիւղեր են եղել ոստանիկների, սպաների համար: Այս հովիտն ունի հրաշալի մարդեր, արօտներ և մացառուներ, որը դարերից ի վեր Կարնոյ-Արծն և այլա Արծնում քաղաքին մատակարարել է մինչև օրս-սեր, կարագ և պանիր: Ամէն մի գիւղում նկատելի է կործանուած տաճարների հետքերը և բարձունքներում աւերակ վանքերի մնացորդները: Չերմէսը ակունքում կոչուած է նոյնպէս Սոլճատ: Ճորոխի սկզբնական այս հովիտը հիւսիսից՝ Տանձոտ, Սորթիկ, Օրթա-Գուլ և Էլէքսըթի լճով է պատած: Իսկ հարաւից՝ Թորաման, Բագան, Քեսերչի-թաշ, Սարխան լճով, որոնք հովիտից 2-3000' բարձրութիւն ունին և պատասպարում են բքից և ստոնամանիքից, պատած են մացառուներով և կարճ անտառներով:

Չերմէս վտակը Մասսաթ քարվանսարայի մօտ միանում է Կուրդ առուակին և անունը փոխում—Մասսաթի վտակ է կոչուած: Ինչպէս Չերմէս վտակը կազան-Բաշի լեռներից ուղիղ արեւմուտք է գնում, այնպէս էլ Կուրդ առ. Օլուխի լճից ուղղակի արեւմուտք է հոսում, քան կիրճետար երկարութեամբ միանում է Չերմէսին ձախ ափից: Կուրդ առ. անցնելով Քեսերչի և Սարխան լճի միջով, սրանց լանջերն ու ստորոտներն է ոռոգում իր բազմաթիւ առուներով, որոնք տարածուած են արեւելքից-արեւմուտք: Բաշկուրդ, Սըզըզընդան, Զէհենդուր, Փաշաֆի, Գիւլիգա և Գեօկ գիւղերը: Կուրդ առ. ձախից ընդունում է Չանգալար առ-ը, որը ոռոգում է Չագա, Դենչիկ, Զերիմ, Գենէյդ, Փերիմէ և միւս ճիւղերով Չանգալար և այլ միանալով անցնում են Չանգալար/սանից, Ակերնիս, Կալաջըկ (աւե-

նկատել են Ախուջիկ, Բաշքենդ, Բաշօվաջըկ, Օլուխի, Ճատակ, Թոփրագ-Կալա և Իւլէքիլիսա: Բաշօվաջըկ երկար ժամանակ հովիտի կենդանական աւանի գերն է կառարել: Եւ իսկական անունը անթափանցելի է մնացել: Օլուխին (Օլուխի — ծորակաւոր, ջրերը ծորակներով հաւաքող-ամփոփող) ջրերի բաժանման ջրարալիական կենդանի լինելու աւերակներ ունի: Թոփրագ-Կալան պարսկական հողաբն որմերով է շինուած, իսկ Իւլէքիլիսան մի հին վանք է, որը այնպէս աւերուած է որ պէտք է պեղել հիմքերը, որ գանուի ձեւերը և յատակազօծերը:

րակ) եւ Էջֆի-Ալմա գեղերից: Չանգա եւ Չանգալար առ-ները բլրուած են Ա.գ եւ Կե-տար եայլա լը-ներից: Կուրդ ջուրն են թափուած նոյնպէս Բեանքչի լը-րից իջնող Սօգիւղի եւ Կոքանիս առուները: Բոլոր առուները ոռոգում են համանուն գեղերը:

Մասսաթի ջուրը գէպի արեւմուտք ուղղուելով՝ ընդունում է ձախից Գեչի-Թե-րեսի առ-ը, որ իջնում է Ջիջի եւ Բեօյ-Դա-ղից եւ ոռոգում է Սիլիւսագալ, Հալվալի, Չախարի, Փիքնեփէ, Չամագեօլ գեղերը, որոնք շատ աղքատ վիճակ ունին: Այստեղ էլ հնութեան ճոխութիւնն ու աւերակներն անպակաս են: Աւելի արեւմուտք խառնուած է ձախից Մասսաթին Ավոզ առուակը, որ ոռոգում է համանուն գեղը: Այդ Մասսաթին խառնուած է Կալա առ-ը, որ իջնում է Կոփ լը-րից եւ ոռոգում է Գերմաշիֆ-խանի, Փաշա-խանի, Կոտ-խանի, Մշեվերիկի, Մշե-վերիկ-խանի, Էրֆելի, Բերեսլի գեղերը եւ Ջինգանէ-Բեօփիլ-խանը: Մասսաթի ջուրը Էշէքսթի լը-րից բազմաթիւ մանր վտակներ է ընդունում, որոց մէջ նկատելի է Լուշնիֆ կամ Լուսոնք վտակը, որ ոռոգում է Լուսնիֆ վանքը լերան լանջերում եւ Լուսնիֆ գեղը տափարակում: Սաղըջա-գետակից իջնում է Սաղըջա առ-ը, որ ոռոգում է համանուն գեղը: Դէպի հիւսիս հոսելով Կալա վտակի ջրերին միախառնուած՝ միա-նում է Մասսաթի վտակին: Աղբջա առ-ը ոռոգում է Բուրնաա Էվերեկ գեղը իրենց եայլաներով: Կալա-(սոցի) առուակի հետ դուզընթաց արեւելահարաւից գէպի հիւսիս է ուղղուած Էրգերում-Տրապիզոն խճուղին, որն անցնում է Բայբուրդից:

Հովտիկի վերոգրեալ 60 գեղերի մէջ 7-8 գեղ միայն տանելի կեանք ունին, մնացեալները ծայր աստիճան թշուառութեան մէջ են: ԺԹ-րդ դարի մէջ որեւէ հայ գեղ չկար այստեղ, բոլորն էլ բնիկներ են Իս-լամն ընդունած եւ թրքախօս: 60 գեղի մէջ որեւէ պայտաղ չունին բնիկներից, որ գոնէ մի էջ կամ եզ պայտէ. բոլոր արհեստաւոր-ները հայեր են: Իսլամ որեւէ արհեստաւոր կամ առեւտրական չունին: Առաջ իրենց հում նիւթերը տալիս էին հայ արհեստաւոր-ներին եւ չարչիներին, սրանցից իրենց կա-րելոր ճոթն ու արեխն էին գնում, կամ իրենց դործիներէ՝ բլրկամ տնակներն էին վերանորոգել: Դրանք: Դերձակ, կօշկակար,

հիւսն ու որմնագիր կարնի դաշտեցի Հայ վարպետներն էին, որոնք պղնձները նորո-գում կամ կլեկում էին: Հովտիկում եր-կրագործութիւնը թոյլ է, աւելի պարապում են անասնապահութեամբ եւ կաթնատնտես-սութեամբ: Մեղուարուծութիւնը նահապե-տական է, բայց ընտիր բերք է տալիս: Թռչնարուծութիւնը թոյլ է եւ անշահ: Բնակչութիւնը ծոյլ է, գութան չունին, արօրը տհաճութեամբ են լծում. այգեգոր-ծութիւն սիրով կատարում են. բայց ցուրտը բերք չի հասցնում: Այս Հովտիկի մէջ գրե-թէ մացրայ չկայ, երեւում է, որ նախկին ոստնիկներն ու սղալական ազատականները թաթարական արշաւականներին աղուհացով զիմաւորել եւ նրանց լեզուի հետ Իսլամն էլ իւրացրել են, որ իրենց նախկին ազնուական կեանքը վարեն սարուկների ծառայու-թեամբ: Անձարացած սերնդէ-սերունդ արք-նել են, բայց աշխատելու չեն վարժուել: Որեւէ նապաստակի, կաքաւի, կամ պախ-րէի որսի ետեւից առանց յոգնելու ժամերով թափառում են, բայց ախտը մարբելուց, մուշտակը կարկատելուց խիստ ճանճրոյթ են զգում եւ չափազանց անչորհք են:

Թէեւ դարերով Իսլամն են դաւա-նում, բայց հաւատ չունին, հին հեթանոսա-կան նախապաշարումներն աշխպէս են ար-մատացած, որ յարկարծական բախտի այցի են սպասում: Հին աւերակները օրերով պե-ղում են որեւէ պղնձի դաշոյն, բրոնզէ ճրագ, երկաթի կտակարա, կաւէ աման եւ այլ իրեր դտնելու եւ դրանք ծախելով՝ ապրելու յու-սով: Նախնիքներից մնացած ամէն տեսակ կահ-կարասի արդէն ծախել-կերել են, նոյն իսկ գերեզմաններից դուրս բերած իրերը՝ իրանց պապերի՝ զիաղազարդերը: Ամբողջ Հովտիկում, ո՛չ միայն բժիշկ, այլ նոյն իսկ գեղատուն եւ վիրարոյժ չկայ. նախա-պետական օրնըխչիները ոչնչացել եւ ար-հեստը բանացնող չեն թողել. գաղանխքն ու արհեստը գերեզման են տարել, յաջորդե-րին առանց վիրարոյժի թողել:

Ղևնիւնական: ԱՏՐՊԵՏ  
(Շարունակելի):

